Մայիսի 28-ին ամբողջ հայ ազգը տոնում է Հայաստանի Առաջին Հանրապետության հռչակման օրը: Ինչպես Մայր հայրենիքում, այնպես էլ հայրենասփյուռ բոլոր համայնքներում տեղի են ունենում ոգեկոչման հանդիսություններ:

Բաթումի «Սուրբ Փրկիչ» եկեղեցում հոգևոր հովիվ Տեր Արարատ քահանա Գումբալյանի կողմից երեկոյան ժամերգության ավարտին հանդիսավորությամբ կատարվեց Գոհաբանական մաղթանք՝ նվիրված Հայաստանի Առաջին Հանրապետության հռչակմանը: Վերջինիս ներկա էր Բաթումիում գործող ՀՀ Գլխավոր հյուպատոսության առաջին քարտուղար Տիար Արմեն Գրիգորյանը:
Տեր հայրն իր քարոզի խոքում նշեց
ազատության և անկախության արժեքն ու նշանակությունը հայոց ազգի համար:

Այս տարի մայիսի 28-ին Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին նշում է նաև Սուրբ Գայանե կույսի տոնը (նշնեք որ մեկ օր առաջ նշվեց Սուրբ Հռիփսիմե կույսի տոնը): Տեր Արարատի կոչով եկեղեցում սուրբ ժամերգությանը ներկա էին Սուրբ Կույսի անունը կրող աղջիկներ, կանայք: Ժամերգության ընթացքում հոգևոր հայրը կատարեց օրհնության

կարգ, բարեխոսական աղոթք՝ մաղթելով Սուրբ Կույսի բարեխուսությունը և հորդորելով ներկաներին
՝

հետևել
սուրբի՝ Աստծուն նվիրվելու և խոնարությամբ ծառայելու օրինակին:
Տեր հայրը հավատացյալներին բաժանեց նաև հուշանվերներ: